դնում են թէյ ու կերակուր այն համոզումով, որ հոգիները կարող են այդ բոլորը վայելել, միայն ի հարկէ՝ ո՛չ նիւթապէս, այլ միայն կերակուրների ոգին:

Մեռելների հոգսը քաշելը այն աստիճան խոր է նստած ճապոնացու մէջ, որ հնում հաւատարիմ ծառաները անձնասպան էին լինում, որպէս զի նոր մեռած տէրը ծառայութեան կարօտ չը մնայ միւս կեանքում:

Մեռելոցը մասնաւորապէս մի հանդիսաւոր տօն է եւ տեւում է երեք օր, յուլիսի 13-ից մինչեւ 15-ը:

Ընտանեկան խորանը գեղեցիկ կերպով զարդարում են ծաղիկներով, իսկ տան մուտքի մօտ արեւը մայր մտնելուն պէս վառում են մի լապտեր, որպէս զի հոգիների գալու ճամփան լուսաւոր լինի. լապտերների ամբողջ մի երկար շարք վառում են նաեւ ծովի ու գետերի ափին հոգիների գալը տօնելու համար:

Հոգիները պիտի գան ջրով, որովհետեւ ճապոնացու համոզումով ջուրը անմիջապէս հաղորդակցութիւն ունի հոգիների ստորերկրեայ աշխարհի հետ:

Գիշերը մեծ կենդանութիւն է տիրում գերեզմանոցում, ուր բոլոր շիրիմները ունեն իրանց ծաղիկն ու լապտերը:

Սգւորները նէր են բերում, խունկ ծխում ու նուիրական իւղ են թափում ջուրը:

Ամենից հետաքրքրականը վերջին գիշերն է, հոգիների հրաժեշտի գիշերը:

Յարդէ մանրիկ նաւակների մէջ դնում են ուտելիք, վառում են մի ճրագ եւ գիշերը իջնելուն պէս ծով են գցում: Այնպէս որ ծովի ամբողջ մակերեւոյթը ծածկւում է այդ հազարաւոր փոքրիկ լոյսերով, որոնց հեռու ու հեռու է քշում